**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/34986-2019**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՆ-206-24.06.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-206-24.06.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման համակարգից կարող են օգտվել նաև ծառայությունների մատուցման, կապալի կամ քաղաքացիաիրավական բնույթի ցանկացած այլ պայմանագրով աշխատանք կատարող ֆիզիկական անձինք:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումների համաձայն՝ եկամտային հարկի վերադարձման համակարգը կիրառվում է միայն վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց շարքում ներառված չեն այն քաղաքացիները, որոնք աշխատում են ծառայությունների մատուցման կամ քաղաքացիաիրավական բնույթի այլ պայմանագրերի հիման վրա: Միաժամանակ նշվում է այն հանգամանը, որ այդ պայմանագրերով աշխատողների նկատմամբ չկա որևէ տարբերակում ինչպես եկամտային հարկի դրույքաչափի, այնպես էլ վճարման կարգի վերաբերյալ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1. Վերջին շրջանում պարբերաբար ներկայացվում են առաջարկություններ (այդ թվում՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից), որոնք ուղղված են եկամտային հարկի վերադարձման՝ գործող համակարգի կիրառության շրջանակի ընդլայնմանը: Այդ կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է մի շարք հաշ-վարկներ, որոնցով հիմնավորվել է եկամտային հարկի վերադարձման համակարգի կիրառության շրջանակի ընդլայնմանն ուղղված քայլերից ձեռնպահ մնալու անհրաժեշտությունը: Այս առումով՝ ներկայացված առաջարկությունը նույնպես ուղղված է եկամտային հարկի վերադարձման համակարգի շրջանակն ընդլայնելուն, և այս դեպ-քում նույնպես գտնում ենք, որ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ նման քայլերից՝ հաշվի առնելով նաև հետևյալը.

1) ամբողջ աշխարհում բնակարանաշինությունը համարվում է շահութաբեր և մասնավոր ներդրողների շրջանում հետաքրքրություն վայելող ոլորտ: Այս պարագայում

պետական բյուջեի սահմանափակ հնարավորությունները բնակարանաշինությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին աջակցության նպատակով օգտագործելը բյուջետային ծախսերի առաջնահերթությունների որոշման քաղաքականության տեսանկյունից հիմնավորված չէ.

2) նախագծի ընդունումը նշանակում է պետական բյուջեից սուբսիդավորման ճանապարհով ավելի խթանել երկու ոչ արտահանելի՝ ֆինանսական և շինարարության ոլորտների զարգացումը, ինչը համահունչ չէ ՀՀ կառավարության որդեգրած՝ տնտեսության արտահանելի հատվածը խթանելու քաղաքականությանը.

3) եթե նույնիսկ հաշվի առնենք այն հանգամանքը, որ եկամտային հարկի վերադարձման համակարգի կիրառության շրջանակն ընդլայնելու միջոցով միգուցե հնարավոր է լինելու առավել խթանել շինարարության ոլորտի զարգացումը, ապա այդ կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ նկատառումները՝

ա. եկամտային հարկի վերադարձման համակարգի ներդրման սկզբնական փուլում որևէ սահմանափակում չնախատեսելը պայմանավորված էր այն հանգաման-քով, որ անհրաժեշտություն էր առաջացել նպաստել շինարարության ոլորտի վերականգնմանը և հետագա աճին՝ հաշվի առնելով այն, որ 2009 թվականի ճգնաժամից հետո շինարարության ոլորտը տարիներ շարունակ նվազել է: Չնայած մինչև օրս շինարարության ծավալները ցածր են նախաճգնաժամային մակարդակից (վերջինիս բարձր մակարդակը պայմանավորված էր այդ տարիների բնակարանային շինարարության բումով, որը ներքին պահանջարկի վրա հիմնված անկայուն տնտեսական աճի մոդելի հետևանք էր), այնուամենայնիվ, վերջին տարի-ներին ոլորտը սկսել է վերականգնվել, և արձանագրվել են աճի միտումներ: Զուգահեռաբար ակտիվացել են նաև անշարժ գույքի և հիփոթեքային վարկերի շուկաները: Ավելին՝ աճի միտումները շարունակվում են նաև 2019 թվականին. ընթացիկ տարվա հունվար-ապրիլ ամիսներին շինարարության ոլորտն աճել է 8 տոկոսով: Ընդ որում՝ բնակչության և կազմակերպությունների միջոց-ների հաշվին իրականացվող շինարարության ծավալները հունվար-ապրիլ ամիսներին 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են համապատաս-խանաբար 19.3 և 10.7 տոկոսով,

բ. շինարարությունը 2018 թվականին շարունակել է աճել՝ արձանագրելով 0.8 տոկոս աճ և 0.1 տոկոսային կետով նպաստել է տնտեսական աճին (2017 թվականին աճը կազմել է 2.8 տոկոս, իսկ տնտեսական աճին նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ): Բացի

այդ, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ինչպես բնակչության, այնպես էլ կազմակերպությունների միջոցների հաշվին իրակա-նացվող շինարարության ծավալների աճի տեմպերը 2018 թվականին արագացել են (համապատասխանաբար 5.4 տոկոս և 1.2 տոկոս՝ 2017 թվականի 0.1 տոկոսի և -1.8 տոկոսի դիմաց).

4) եկամտային հարկի վերադարձման համակարգը, ըստ էության, պետք է ընկալվի ոչ թե որպես համակարգի շահառուներին տրամադրվող հարկային արտոնություն, այլ որպես սոցիալական քաղաքականության շրջանակներում շահառուներին տրամադրվող բյուջետային աջակցություն, քանի որ համակարգի շահառուներն ընդհանուր սահմանված կարգով հաշվարկում և կատարում են եկամտային հարկի գծով իրենց հարկային պարտավորությունները, որից հետո նոր միայն դիմում են պետական բյուջեից եկամտային հարկի գումարը հետ ստանալու համար: Հետևաբար գտնում ենք, որ այս համակարգի կիրառության արդյունավե-տությունը գնահատելիս կամ համակարգի կիրառության շրջանակներն ընդլայնելու որոշում-ներ կայացնելիս շատ կարևոր է, որ համակարգը դիտարկվի բյուջետային գործընթացի շրջանակներում սոցիալական նշանակությամբ պետական աջակցության ծրագրերի ընդհանուր համատեքստում: Այս առումով, կարևորելով սահմանափակ բյուջետային միջոցներն առավելագույն հասցեականությամբ և առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու նպատակադրումը, գտնում ենք, որ նախագծի ընդունման արդյունքում առաջացող՝ պետական բյուջեի լրացուցիչ ծախսերը հիմնավորվածության ու առաջնահերթությունների առումով պետք է անպայմանորեն համադրվեն միևնույն՝ սոցիալական ոլորտում այլ բյուջետային ծրագրերի շրջանակներում կատարվող ծախսերի հիմնավորվածության ու առաջնահերթությունների հետ: Նախագծի ընդունման հիմնավորմամբ, սակայն, նման համադրումներ չեն կատարվել, հետևաբար պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ պետք է նախագծի ընդունման պարագայում առաջացող լրացուցիչ բյուջետային ծախսերը կատարվեն ի հաշիվ սոցիալական ոլորտում այլ բյուջետային ծրագրերի շրջանակներում կատարվող ծախսերի:

2. Առաջարկությունը խնդրահարույց է նաև գործնականում կիրառելու տեսանկյունից: Մասնավորապես՝

1) ՀՀ հարկային օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ ի տարբերություն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնց մասով եկամտային հարկի

հաշվարկն իրականացվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտների մասով եկամտային հարկի հաշվարկն իրականացվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Քաղաքացիաիրավական պայմանագրով (որի կատարումը կարող է մի քանի եռամսյակից կամ տարուց ավելի ժամանակահատված պահանջել) կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) դիմաց պատվիրատուի կողմից եկամտի վճարումը հիմնականում կատարվում է աշխատանքի (ծառայության) արդյունքները վերջնական ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ ձևով և պայմանավորված ժամկետում: Տվյալ դեպքում թեև վճարված եկամուտը վերաբերում է երկարատև ժամանակահատվածում կատարված աշխատանքին, այդուհանդերձ, այդ եկամուտը և դրանից հաշվարկվող, պահվող և բյուջե վճարվող եկամտային հարկը չի բաշխվում այդ ժամանակահատվածը ներառող ամիսների վրա, քանի որ գործում է եկամտային հարկի հաշվարկման դրամարկղային մեթոդը: Ուստի ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ եկամտային հարկի գումարները եռամսյակային պարբերականությամբ վերադարձնելը այդ պայմանագրերի դեպքում հնարավոր չէ: Հետևաբար առաջարկությունն ընդունելու պարագայում՝ հարկ վճարողները հնարավորություն չեն ունենա հետ ստանալու այն ամիսների համար վճարված հիփոթեքային վարկի տոկոսները, որոնց ընթացքում թեև փաստացի աշխատանք է կատարվել, սակայն եկամտի վճարում, հետևաբար նաև՝ եկամտային հարկի պահում չեն իրականացվել.

2) տարածված են նաև այն դեպքերը, երբ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների (մատուցվող ծառայությունների) համար վճարումը կատարվում է նախապես՝ կանխավճարի ձևով: Այս դեպքում նույնպես հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների վերադարձման համակարգի կիրառու-թյունը խնդրահարույց է, քանի որ այն հնարավորություն կընձեռի պետական բյուջեից անհիմն ձևով հետ ստանալու եկամտային հարկի գումարները՝ դրանով իսկ հանգեցնելով չարաշահումների և իմաստազրկելով ներդրված ու հաջողությամբ գործարկված՝ հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների չափով եկամտային հարկի վերադարձման համակարգը:

3. Միաժամանակ հայտնում ենք, որ 2015 թվականի ընթացքում վարկառուներին (համավարկառուներին) վերադարձվել է 273,9 մլն. դրամ, 2016 թ.՝ 1.349,8 մլն. դրամ, 2017 թ.՝ 2.416,0 մլն. դրամ, իսկ 2018 թ.՝ 4.683,7 մլն դրամ, ինչը նշանակում է, որ եկամտային

հարկի վերադարձման համակարգի շրջանակներում պետական բյուջեից կատարվող ծախսերը էական են և ամեն տարի աճում են: Բացի այդ, վերջին տարի-ներին աճել է նաև համակարգից օգտվողների քանակը: Մասնավորապես՝ 2015 թվականի ընթացքում համակարգում ներգրավված է եղել 560, 2016 թ.՝ 1276 մասնակից, իսկ 2018 թվականի դեկտեմբեր ամսվա ավարտին համակարգում ներգրավված է եղել 4021 մասնակից՝ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի 2295 մասնակցի դիմաց: Այսինքն՝ ամեն տարի աճում է նաև մասնակիցների թիվը: Այս առումով՝ ակնհայտ է, որ նշյալ ծախսերն առավել ավելացնելու առաջարկությունների ընդունումը ռիսկային է և նպատակահարմար համարվել չի կարող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ եկամտային հարկի վերադարձ-ման համակարգի կիրառության շրջանակի ընդլայնման ցանկացած առաջարկություն համարում ենք սկզբունքորեն անընդունելի:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի ընդունման պարագայում անհրա-ժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավա-րության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 1321-Ն որոշման մեջ:

30 հուլիսի 2019 թվականի N 1015 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-206-24.06.2019-ՏՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 30
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Խ-206-24.06.2019-ՏՀ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.***

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի վերնագիրը «վարձու» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ աշխատանքային, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման, կապալի կամ քաղաքացիաիրավական բնույթի ցանկացած այլ պայմանագրով)» բառերով:

2. Նույն հոդվածի 1-ին մասը «Վարձու» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ աշխատանքային, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման, կապալի կամ քաղաքացիաիրավական բնույթի ցանկացած այլ պայմանագրով)» բառերով:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաեւ պետության եւ (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով վճարված եկամտային հարկի վերադարձ է նախատեսվում վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց համար, որոնց շարքում ներառված չեն այն քաղաքացիները, ովքեր աշխատում են ծառայությունների մատուցման կամ քաղաքացիաիրավական բնույթի այլ պայմանագրերի հիման վրա:

Այդ պայմանագրերով, սակայն, չկա որեւէ տարբերակում ինչպես եկամտային հարկի դրույքաչափի, այնպես էլ վճարման կարգի վերաբերյալ:

Հետեւաբար, կարծում ենք, որ նման սահմանափակումը չունի որեւէ հիմնավորում եւ առաջացնում է չհիմնավորված խտրականություն:

Ներկայացված օրենսդրական փոփոխության առաջարկով նախատեսվում է հարկային օրենսգրքով սահմանված արտոնությունը կիրառել նաեւ ծառայությունների մատուցման եւ քաղաքացիաիրավական բնույթի այլ պայմանագրերով աշխատող քաղաքացիների նկատմամբ: